Եղիշե Չարենց

Նորից՝ Արմենուհի Տիգրանյանին

Երազիդ մեջ տեսածի հիդ

Ինձի մէ հեսաբ մի անի...

Սայաթ Նովա

Ես այն աշխարհից եմ եկել,
Ուրիշ է իմ կարոտը անբառ:
Չկա փրկության մի երկիր,
Չկա փրկության ճանապարհ:
Մարդիկ ես սիրում եմ նրանց
Բայց այլ է կարոտը իմ անհուն.
Այս գորշ աշխարհի վրա
Կարող ես սփոփել միայն դո՛ւ:

Միայն դո՛ւ կարող ես հասկանալ
Հոգուս տխրությունը անել,
Ուզում եմ ցնդել, վերանալ,
Ուզում եմ միշտ քե՛զ հետ լինել:
Ուզում եմ հավիտյան շնչել
Անուշ թովչությունը դեմքիդ
Խմել քո երգերը հնչեղ

Ու կորչել քո երգում վճիտ...

9. III. 1920